ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց պատմություն (5 դասաժամ), ֆիզկուլտուրա (5 դասաժամ), համաշխարհային պատմություն (3 դասաժամ), ֆիզիկա (9 դասաժամ) անգլերեն (17,5 դասաժամ), մաթեմատիկա (նպատակային) (5 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),

մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

-կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

_Հանրակրթության մասին օրենքի 26-րդ հոդվածի 21-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան տեղեկանք բարձրագույն ուսումնական հաստատությունից

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ.օգոստոսի 28-ից սեպտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15-ին ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 83-51-27 հեռախոսահամարով: